# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 26.09.2017թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի**

**թիվ ՍՑ-ԷՍ-2017/37**

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 25.08.2017թ. թիվ 03/26-3/15507-17 գրությամբ «Կամպարե» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարության 24.08.2017թ. թիվ 04/19.3/11266-17 գրության հիման վրա, 25.08.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Կամպարե» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

**2. <u>ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը 09.06.2017թ. թիվ ԴՎԱ/1439 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից 09.08.2017թ. կազմակերպված գնանշման հարցման ձևով թիվ «ՀՀԿԳՆԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով «Երևանի Ս. Հովսեփյանի անվան թիվ 115 ավագ դպրոց ՊՈԱԿ-ի թիվ 3 մասնաշենքի տանիքի վերանորոգման լրացուցիչ աշխատանքների գնման գործընթացին հայտ է ներկայացրել «Կամպարե» ՍՊԸ-ն:

Վերը նշված գործընթացի գնահատող հանձնաժողովի 09.08.17թ որոշմամբ «Կամպարե» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին առաջարկվել է ներկայացնել որակավորումը հիմնավորող փաստաթղթերը: Սակայն վերջինիս կողմից դրանք ներկայացվել են թերի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի համաձայն տրված շտկման հնարավորությունից հետո ներկայացված «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի հետ 08.06.2015թ. կնքված թիվ Բ53/15 պայմանագիրը կրկին մնացել է թերի՝ պայմանագրի անբաժանելի մասը համարվող թիվ 1 և 2 համաձայնագրերը չեն ամբողջացվել, ինչը հնարավորություն չի տվել հանձնաձողովին գնահատելու մասնակցի որակավորումը «Մասնագիտական փորձառություն» չափանիշի գծով և վերջինիս հայտը մերժվել է:»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչներ Արտաշես Դանիելյանը և Մասիս Աղայանը:

**3. <u>« Կամպարե » ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Խորհուրդը դիմել է «Կամպարե» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.08.2017թ. թիվ 03/26-3/15507-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Ընկերության տնօրեն Արթուր Մաթևոսյանը և Քչիստինա Գրիգորյանը:

**4. <u>ՍՑ-ԷՍ-2017/37 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.08.2017թ. թիվ 03/26-3/15507-17 գրությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 24.08.2017թ. թիվ 04/19.3/11266-17 գրությունը և գրությանը կից ներկայացված փաստաթղթերը, «ՀՀԿԳՆԳՀԱՇՁԲ-17/1» գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 09.08.2017թ. նիստի թիվ 2, 15.08.2017թ. նիստի թիվ 3 և 18.08.2017թ. նիստի թիվ 4 արձանագրությունները, «ՀՀԿԳՆԳՀԱՇՁԲ-17/1» գնանշման հարցման ընթացակարգի հրավերը.

ՀՀ կրթության և գիտության նախարարության վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ՀՀԿԳՆԳՀԱՇՁԲ-17/1» գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ նաև ընթացակարգ):

«Կամպարե» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրել է հայտ:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 3 հավելվածով՝ հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀԿԳՆԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված

որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 09.08.2017թ. ժամը 09:30-ին կայացած նիստի N 2 արձանագրության 6.1 կետով որոշել է «Կամպարե» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղն զբաղեցրած մասնակից և առաջարկել է ներկայացնել ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 15.08.2017թ. ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1.3 կետով Ընկերության կողմից ներկայացրած փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունները՝

- ներկայացված 08.06.2015թ. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի հետ կնքված թիվ Բ53/15 պայմանագիրը թերի է, քանի որ բացակայում են պայմանագրում նշված և անբաժանելի մասը համարվող թիվ 1-4 հավելվածները, ինչպես նաև թիվ 1 համաձայնագիրը:
- բացակայում է հավելված 5.1-ով ներկայացված ավտոկռանի արտադրության տարեթիվը:
- բացակայում է հավելված 5.2-ով ներկայացված մասնագետի գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը:

Նույն արձանագրության 1.3 կետով Ընկերությանը առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 18.08.2017թ. թիվ 4 արձանագրության 1.2 կետով արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված՝ շտկված փաստաթղթերում ներառված՝

- թիվ 1 համաձայնագրին կից ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվը ամբողջական չէ;
- թիվ 2 համաձայնագրով սահմանված՝ կից ծավալաթերթ-նախահաշիվը բացակայում է:

Նույն արձանագրության 2.1 կետով հանձնաժողովն արձանագրել է նաև, որ հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ստացված եզրակացությունը և հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «Կամպարե» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Նկատի ունենալով, որ Ընկերության կողմից որպես հրավերով նախատեսված «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի առկայությունը հիմնավորող նմանատիպ պայմանագիր ներկայացվել է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և Ընկերության միջև 08.06.2015թ. կնքված «Բ 53/15» գնման պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր), Խորհուրդը 07.09.2017թ. կայացած նիստի ժամանակ որոշեց ներգրավել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին՝ Պայմանագրի շրջանակներում կնքված լրացուցիչ աշխատանքների կատարման համաձայնագրերի վերաբերյալ համապատասխան պարզաբանումներ ստանալու նպատակով:

Խորհուրդում 13.09.2017թ. կայացած նիստի ժամանակ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի ներկայացուցիչը հայտնեց, որ «Բ 53/15» գնման պայմանագրի շրջանակներում կողմերի միջև կնքվել են 04.09.2015թ. N1 և 30.11.2015թ. N2 համաձայնագրերը: «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի ներկայացուցիչը հայտնեց նաև, որ N1 համաձայնագրով սահմանված Պայմանագրի ծավալաթերթ-նախահաշիվը նոր խմբագրությամբ հաստատելու մասին սահմանումը տեխնիկական վրիպակի արդյունք է և Պայմանագրի նոր ծավալաթերթ-նախահաշիվը հաստատվել է N2 համաձայնագրի հավելվածով, սակայն կրկին տեխնիկական վրիպակի հետևանքով հավելվածում նշվել է, որ այն հանդիսանում է 04.01.2015թ. կնքված N1 համաձայնագրի հավելվածը:

Խորհուրդն արձանագրում է, որ նշված համաձայնագրերում տեղ գտած անհամապատասխանություններն առաջացել են Պատվիրտուի կողմից նշված փաստաթղթերը կազմելիս և Պայմանագրի ծավալաթերթ-նախահաշիվը նոր խմբագրությամբ հաստատվել է Պայմանագրի շրջանակներում կնքված N2 համաձայնագրով, հետևաբար Խորհուրդը գտնում է, որ ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված Պայմանագիրը և դրա շրջանակներում կնքված N1 և N2 համաձայնագրերը թերի չեն:

Խորհրդում կայացած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ 18.08.2017թ. ժամը 14:00-ին կայացած նիստի 2.1 կետով արձանագրված ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացության հիման վրա «Կամպարե» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու որոշումը տեխնիկական վրիպակի արդյունք է:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:
- 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

• 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

• 61-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

Հրավերի 8.13-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու

օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Հրավերի 8.21-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.20-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայման-

ներին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Կամպարե» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

## Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.08.2017թ. «Կամպարե» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**ՀՀ գնումների բողոքարկման**
**խորհրդի անդամ՝**

**ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**